

37 Արդ յետ աւուրց Սարգիս անդրէն  
 Լեալ առ Յակոբ՝ յայտնէր անդէն  
 Հըրաժարել հըռչակօրէն  
 Յեւդոկիոյ տեսչութենէն :

38 Ձոր եւ մաղթէր եղբայրօրէն  
 Թողուլ ապրիլ անքոյթօրէն  
 Ձինքն յայն Պօլիս առանձնօրէն  
 Առանց գահի աղքատօրէն :

39 Իսկ Պատրիարքն Յակոբ աստէն  
 Ոչ բարբառեալ իշխանօրէն՝  
 Հայցէր բզնա բնկերօրէն  
 Դեռ սչ մեկնիլ յայն պաշտօնէն :

40 Որ եւ ասէր անկեղծօրէն,  
 Թէ ի մօտոյ ի Դըրանէն  
 Առ ի սակս քոյ գիր յատիօրէն  
 Ընդնոյն հօտիդ հովուութենէն :

41 Ապա չէ ինձ վայել ւ՛ օրէն  
 Խօսիլ ի Դ՞րան արդ զայն գահէն,  
 Այժմ՝ ժառանգեալ գեթ յայս օրէն  
 Սինչեւ ցամ մի զայն հովուօրէն :

42 Առ այս Սարգիս հնազանդօրէն  
 Հաճեալ լըռէր ըզհըրաժեշտէն,  
 Ի՛ ինքն ոչ մեկնեալ ի մեծ Պօլսէն  
 Հովուիւր նոյն հօտ յիւր փոխանէն :

43 Եւ զի աքսոր կոյտ վընասուց  
 Առիթ եղեն ծանրը ծախուց,  
 Վասն այն Սարգիս տարապարտուց  
 Կայր ի ներքոյ բաղուժ պարտուց :